ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ANQA-2021/43

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 մայիսի 2021 թ. N 43

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ «Հայկական բժշկական ինստիտուտ» ԱԿ
Գործունեության հասցեն՝ *ՀՀ ք. Երևան, Տիգրան Մեծի 14*

Նախորդ հավատարմագրման մասին
որոշումը և ժամկետը՝ **չի ունեցել**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2021 թվականի մայիսի 5-ին Հավատարմագրման Հանձնաժողովի նիստում քննարկեց «Հայկական բժշկական ինստիտուտ» ԱԿ-ի (այսուհետ՝ ՄՈՒՀ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով ՄՈՒՀ-ի կողմից ներկայացված ինքնավերլուծությունը, փորձագիտական զեկույցը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ բուհի դիտողություններն ու առաջարկությունները, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիրը, լսելով փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երեք անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ՄՈՒՀ-ի

ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում՝ 19 դեկտեմբեր 2018թ.
ինքնավերլուծության ներկայացում՝ 13 սեպտեմբերի 2019թ.
փորձագիտական այցի իրականացում՝ 16-18 դեկտեմբերի 2019թ.
փորձագիտական զեկույցի ներկայացում՝ 11 մարտի 2020թ.
թերությունների վերացման ծրագրի ներկայացում՝ 5 հունիսի 2020թ.

«Հայկական բժշկական ինստիտուտ» արտադրական կոպերատիվի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով: Ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներից **«Կառավարում և վարչարարություն», «Մասնագիտության կրթական ծրագրեր», «Հետազոտություն և զարգացում», «Հասարակական պատասխանատվություն»** չափանիշները գնահատվել են անբավարար:

Գնահատում իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ «Հայկական բժշկական ինստիտուտ» ԱԿ-ն իր արաքելության համաձայն «ՀԲԻ-ն բժշկական ուղղվածություն ունեցող մասնավոր բարձրագույն ուսումնական հաստատություն է, որի հիմնական առաքելությունը ուսանողներին որակյալ տեսական գիտելիքներ, գործնական հմտություններ և մասնագիտական կոմպետենցիաներ տրամադրելու միջոցով նրանց մեջ կլինիկական մտածողության ձևավորումն է: Հաշվի է առնվել նաև այն հանգամանքը, որ ՀԲԻ-ն ներկայում գտնվում է բարեփոխումների փուլում և դեռևս նոր են ձևավորվում ՀԲԻ տարբեր ոլորտներում պլանավորում-իրականացում-ստուգում-բարելավում ցիկլի ներդրման հիմքերը»:

1. ***ՄՈՒՀ-ը հիմնականում ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում:***

ՀԲԻ-ն մեկնարկել է վերջնարդյունքահեն կրթական ծրագրերի մշակումն ու իրականացումը: ՄԿԾ-ները ներառում են բոլոր անհրաժեշտ բաղադրիչները, առկա են նաև ծրագրերին առնչվող բոլոր գործընթացների վերաբերյալ փաստաթղթերը: Գործնական հմտությունների ձեռքբերման համար ուսանողներին հասանելի են Երեբունի բժշկական կենտրոնի ռեսուրսները:

Այնուամենայնիվ առկա են որոշակի թերացումներ դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների ընտրության քաղաքականության և ուղենիշների հարցում: ՄԿԾ-ների իրականացման արդյունավետության նկատմամբ մշտադիտարկումը թեև առկա է, սակայն, առկա է գործնական հմտությունների գնահատման անհստակություն: Տարբեր ցիկլերի վերահսկողության իրականացման հարցում ևս առկա են խնդիրներ: ՄԿԾ-ների

պլանավորման, իրականացման և մշտադիտարկման գործընթացներն ունեն բարելավման անհրաժեշտություն:
Պրոֆեսորադասախոսական կազմը հիմնականում բաղկացած է գործող, փորձառու բժիշկներից, ինչն էական դրական ազդեցություն ունի մատուցվող կրթական ծառայությունների որակի վրա: ՀԲԻ-ում վարվում է պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության որոշակի քաղաքականություն, առկա են ՊԴ կազմի գնահատման և վերապատրաստման կոնկրետ մոտեցումներ, որոնք ուղղված են դասավանդողների կատարելագործմանը, կարևորվում է ՊԴ կազմի երիտասարդացումը:
Դրական է կայուն համագործակցությունը կլինիկաների հետ, ինչպես նաև ռեսուրսների և հիվանդանոցային իրական միջավայրի ամենօրյա հասանելիությունը ուսանողներին:

Ընդհանուր առմամբ գործող կրթական ծրագրերը, պրոֆեսորադասախոսական կազմն ու նյութատեխնիկական հագեցվածությունն ապահովում են գործատուների պահանջներին համապատասխան շրջանավարտների պատրաստումը և հիմնականում ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում:

2. *Կառավարման և որակի ապահովման համակարգերը հիմնականում աջակցում են որակավորումների շնորհման արժանահավատության բարելավմանը*

Վերջին տարիներին ՀԲԻ-ն մեկնարկել է ռազմավարական պլանավորման որոշակի մոտեցումներ: Սակայն դեռևս ոչ բոլոր մակարդակներում է իրականացվում ռազմավարական պլանավորում: ՄՈՒՀ-ի կառավարումը իրականացնում են 4 հիմնադիրները ռոտացիայի սկզբունքով: Սակայն հստակ չէ՝ որքանով է այս մոտեցումը նպաստում արդյունավետ կառավարմանը:
ՀԲԻ Կառավարման համակարգի օղակների միջև միջև իշխանությունը և լիազորությունները բաշխված չեն:
Չնայած առկա են տվյալների հավաքագրման մեխանիզմներ և համակարգեր, սակայն բացակայում են տվյալահեն որոշումների կայացման, արդյունքահեն կառավարման մոտեցումները:
Թեև որակի ներքին ապահովման համակարգը նոր է ներդրվել, առկա են որակի շարունակական բարելավման մշակույթի ներդրման նախադրյալներ: ՀԲԻ ՈԱ ներքին համակարգն ընդհանուր առմամբ նպաստում է գործընթացների շարունակական բարելավմանը և փորձում է նպաստել որակի ապահովման և վերահսկման համակարգի ձևավորմանը:
ՀԲԻ-ում առկա է ՈԱ գործընթացների որակական աճ, իսկ որակի ապահովման կենտրոնի գործունեության կայունությունը, ներքին շահակիցների ներգրավվածությունը այդ գործընթացներում գնահատելի է:

3. *Միջազգայնացումն ու հետազոտական/ստեղծագործական գործունեությունը զարգացման միտումներ ունեն:*

ՀԲԻ-ում հետազոտության ոլորտում առկա են որոշակի խնդիրներ: Բացակայում է բուհի հետազոտական ուղղություններն ու հավակնություններն արտահայտող ռազմավարությունը, առկա չեն երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ հստակ ծրագրեր: Հստակ չէ հետազոտական և ուսումնական գործընթացների միջև կապը, ինչը պայմանավորված է գիտական գործունեության կառավարման ոչ լիարժեք մեխանիզմներով:

ՀԲԻ-ն դեռևս խիստ պասիվ է հասարակական պատասխանատվության գործողություններում: Միևնույն ժամանակ արդյունավետ են արտաքին շահակիցների հետ կապերը: ՀԲԻ-ն արտաքին կապերի միջոցով ապահովում է փորձի որոշակի փոխանակում ու զարգացում, պահպանելով ձևավորված սերտ և կայուն կապերը տեղական տարբեր կլինիկական կազմակերպությունների հետ, նպաստում է որակավորումների արժանահավատ շնորհմանը:
Միջազգայնացման ուղղությամբ ՀԲԻ-ն կատարում է առաջին քայլերը, ունի նպատակներ, ռեսուրսները աստիճանական համապատասխանեցնում է օտարերկրյա ուսանողների կարիքներին: Նախատեսված աշխատանքները կստեղծեն հնարավորություններ ՄՈՒՀ-ի հետագա զարգացման և առաջխաղացման համար:
ՄՈՒՀ-ի արտաքին կապերը և միջազգայնացման ներդրման նախադրյալները աջակցում են որակավորումների արժանահավատ շնորհմանը, իսկ հետազոտական/ստեղծագործական մոտեցումները դեռևս զարգացման կարիք ունեն:

4. Առկա են թերացումներ, որոնք առանցքային ազդեցություն չունեն որակավորման արժանահավատ շնորհման տեսանկյունից, ստեղծված են հիմքեր բարելավումների համար:
5. Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ՄՈՒՀ-ի կողմից ներկայացված ծրագիրը հիմնականում իրատեսական է և պլանավորված բարեփոխումները կբերեն որակական փոփոխությունների:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Հայկական բժշկական ինստիտուտ» ԱԿ-ին շնորհել ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 /չորս/ տարի ժամկետով:**
2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով.
   ա) **«Կառավարում և վարչարարություն», «Մասնագիտության կրթական ծրագրեր», «Հետազոտություն և զարգացում», «Հասարակական պատասխանատվություն»** ոլորտներում առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը,
   բ) բուհի կողմից իրականացվող գործընթացների արդյունավետության գնահատման առաջընթացի ցուցիչների չափելիության հստակեցման անհրաժեշտությունը,
   գ) բուհի կողմից իրականացվող գործընթացների իրականացման և գնահատման համար նախանշված ժամկետների և նախատեսվող ֆինանսական միջոցների չափի հստակեցման անհրաժեշտությունը,
3. Հատուկ ուշադրություն դարձնել.
   ա) կառավարման մարմինների միջև իշխանության և լիազորությունների բաշխմանը, աշխատանքի հստակ բաժանմանը:
   բ) վելուծությունների, հստակ քանակական և որակական տվյալների վրա հիմնված հաշվետվությունների իրականացմանը,
   գ) արտաքին միջավայրի համակարգված վերլուծությունների իրականացման
   դ) ուսումնառության և հետազոտության կապի ամրապնդմանը,

ե) արդյունքահեն կառավարման համակարգի բարելավմանը,

զ) հետազոտական գերակայությունների վերհանմանը, ռազմավարության ձևավորմանը,

է) պրակտիկ կրթություն ապահովելու նպատակով՝հստակ սահմանել սիմուլիացիաների քանակ վերջնարդյունքների ձևավորման համար, ինպես նաև ներդնել ուսանողի պորտֆոլիոն որպես գնահատման գործիք,

ը) հաշվի առնելով կլինիկական ուսուցման առանձնահատկությունները՝ ներդնել ՄԿԾ-ների իրականացման նկատմամբ մշտադիտարկման և արդյունավետության գնահատման գործուն և բարելավմանը միտված մեխանիզմներ,

թ) մշակել և իրագործել դասախոսական կազմի կատարելագործման և բժիշկ մասնագետների մանկավարժական կարողությունների զարգացման ծրագրեր,

ժ) շարունակել իրականացնել որակի շարունկական բարելավման մեխանիզմների ներդրումը ամբողջ բուհում:

4. Կազմակերպել իրականացվող մասնագիտության կրթական ծրագրերի ներքին աուդիտ արտաքին փորձագետների ներգրավմամբ:
5. «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգի 12-րդ կետի պահանջներին համապատասխան 2 տարի մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով հաստատության գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները:
6. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել ՄՈՒՀ-ի գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման Հանձնաժողովի
նախագահ **Ա. Սաղյան**
2021 թ., մայիսի 5
ք.Երևան